ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Հնդկաստանի Հանրապետություն (Նյու-Դելի), 2019 թվական, դեկտեմբերի 2-6-ը

4. Հրավիրող կողմը.

Պատվաստումների և Պատվաստանյութերի Միջազգային Դաշինք (ԳԱՎԻ) կազմակերպություն, Հնդկաստանի Հանրապետության կառավարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Պատվաստումների և Պատվաստանյութերի Միջազգային Դաշինք միջազգային հեղինակավոր կազմակերպության (ԳԱՎԻ) խորհրդի հերթական նիստին և խորհրդի անդամների նախնական հանդիպմանը, ինչպես նաև ԳԱՎԻ դոնոր երկրների կառավարությունների ներկայացուցիչների հետ հատուկ հանդիպմանը:

Հիմնական նպատակն ուղղված էր ԳԱՎԻ իմունոկանխարգելման և առողջապահական համակարգերի ուժեղացմանն ուղղված ծրագրերի իրականացման կարևորագույն խնդիրների քննարկմանը:

6. Քննարկված թեմաները.

Հանդիպումը լավ հարթակ էր ընդհանուր իմունականխարգելման և պատվաստումների խրախուսման ռազմավարությունների մշակման ու իրականացման տեսանկյունից՝ ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանում ծրագրերի զարգացման համար:

Հանդիպման շրջանակում քննարկվել են և ԳԱՎԻ խորհուրդը հաստատել է մի շարք կարևոր որոշումներ: Դրանց թվում են՝ մալարիայի պատվաստանյութի փորձնական ծրագրի հաստատումը, մալարիայի պատվաստանյութի արտադրման համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսավորման տրամադրման և ռիսկերի բաշխման մեխանիզմի հաստատումը, ինչպես նաև էբոլայի պատվաստանյութի արտադրության և պահուստային քանակների ստեղծման ծրագրի ընդունումը՝ ընդհանուր մոտ 200մլն ԱՄՆ դոլար արժողությամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Պատվաստումների և ԳԱՎԻ զարգացման հեռանկարների վերաբերյալ զեկույցով է հանդես եկել ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Ներկայացվել են նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցած հաջողություններն ու նախատեսվող քայլերը:

Օրակարգի թեմաների շուրջ նախարար Արսեն Թորոսյանը, որպես ԳԱՎԻ խորհրդի անդամ, ով ներկայացնում է Եվրոպական և Լատինական Ամերիկայի տարածաշրջանների զարգացող երկրները, ելույթ է ունեցել և հայտնել անդամ երկրներից ստացված ու համաձայնեցրած կարծիքը և դիրքորոշումը մի շարք հարցերի վերաբերյալ: Դրանցից կարևորագույնը՝ միջին եկամուտ ունեցող երկրներին սահմանափակ աջակցության տրամադրման հարցն էր: Մասնավորապես, Արսեն Թորոսյանը նշել է կարևորությունը, որ հաջողութունների հասած և բարձր ցուցանիշներ գրանցած երկրները կարիք ունեն ոչ միայն պահպանելու այդ նվաճումները, այլև առաջ ընթանալու՝ զարգացնելով և արդիականացնելով իրենց ազգային ծրագրերը (օրինակ՝ նոր պատվաստանյութերի ներդրումներ, նորարարություններ):

Մի քանի կարևոր նկատառումներ են հնչել ԳԱՎԻ 5.0 ռազմավարության վերաբերյալ, որոնք հիմնականում առնչվում են ծրագրային ֆիլտրերը մեղմացնելուն:

Հավաքական կարծիք էր ձևավորվել Եվրոպական և Լատինական Ամերիայի տարածաշրջանների երկրներից մալարիայի և էբոլայի պատվաստանյութերի ֆինանսավորման վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ վերը նշված հարցերը բնորոշ չեն մեր երկրներին, սակայն, հասկանալով հարցերի արդիականությունն Աֆրիկյան տարածաշրջանի երկրների համար, և աջակցելով պատվաստանյութերի

արտադրության զարգացմանը, դրական դիրքորոշում է հնչեցվել և այս երկու հարցերը հաստատվել են Խորհրդի կողմից:

Այցի շրջանակում կայացել է երկկողմ հանդիպում Հայաստանի և Հնդկաստանի առողջապահության նախարարների միջև՝ հետագա համագործակցության ուղղությունները քննարկելու նպատակով: Քննարկվել են հայ-հնդկական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր՝ առողջապահական, բժշկական կրթության, ինչպես նաև դեղագործության ոլորտների վերաբերյալ:

Կարևորվել է միջպետական համագործակցությունը բժշկական կրթության ոլորտում՝ հաշվի առնելով Հայաստանում հնդիկ ուսանողների թիվը, և ողջունվել Հնդկաստանի կառավարության կողմից կատարված քայլերը: ՀՀ առողջապահության նախարարը տեղեկացրել է, որ կլինիկական օրդինատուրայի համար ևս մեկ հնարավորություն է ստեղծվել. այսուհետ Հայաստանում անգլերեն լեզվով, տարբեր մասնագիտությունների գծով ուսուցում կարող են ստանալ նաև ՀՀ առողջապահության նախարարության «Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտում»: Հնդկաստանի առողջապահության նախարարը ողջունել է այդ հնարավորությունը, քանի որ բժշկական կադրերի պահանջարկը միշտ մեծ է:

Խոսվել է նաև բժիշկների փոխանակման ծրագրի մասին: Կողմերը քննարկել են փոխանակման ծրագրի շրջանակներում Հայաստանից Հնդկաստան բժիշկներ գործուղելու հարցերը: Վերջիններս հնարավորություն կունենան որոշ բարդ վիրահատությունների մասնակցելու, ինչպիսիք են՝ փոխպաստվաստումը, էնդոպրոթեզավորումը:

Միաժամանակ, Հնդկաստանի առողջապահության նախարարն առաջարկել է իրենց երկիրը դիտարկել բժշկական տուրիզմի տեսանկյունից՝ կազմակերպելով հայ պացիենտների բուժումը Հնդկաստանի բարձրորակ կլինիկաներում:

Մյուս քննարկված հարցը դեղագործական ոլորտում համագործակցությունն ու հնդկական բարձրորակ դեղերի հասանելիության ապահովումն է: Հայաստանը լավ հնարավորություն կարող է լինել Եվրասիական տնտեսական միությունում հնդկական դեղերի համար՝ որպես մուտքի կետ, քանի որ որոշ դեղերի գրանցումն անխոչընդոտ է իրականացվում Հայաստանում և համապատասխանում է Եվրասիական տնտեսական միության չափանիշներին:

Հանդիպմանը քննարկվել է նաև հեպատիտ Ց-ի բուժման ազգային ծրագրի մեկնարկը, որն իրականացվելու է բարձրորակ հնդկական դեղերով:

Արսեն Թորոսյանը բարձր է գնահատել Հնդկաստանի ջանքերը՝ առողջապահության ոլորտը զարգացնելու ուղղությամբ, ինչի վառ վկայությունն է Հնդկաստանի վարչապետի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում՝ Առողջության համապարփակ ծածկույթի վերաբերյալ և նախարար Հարշ Վարդհանի դերը՝ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ու իմունիզացիայի գործում:

Ամփոփելով համագործակցության հեռանկարները՝ Հնդկաստանի առողջապահության նախարարի հետ քննարկվել են նաև նախկինում հնդկական կողմին ներկայացված առողջապահության ոլորտում համագործակցության վերաբերյալ միջգերատեսչական համաձայնագրի ու դեղերի շրջանառության կարգավորմանը վերաբերող Փոխըմբռնման հուշագրի նախագծերի ստորագրման հնարավորության հարցը:

ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը գործընկերոջը հրավեր է հղել այցելելու Հայաստան:

Հնդկաստանում Հայաստանի դեսպան հետ հանդիպում է եղել Նյու-Դելիում ապրող մեր հայրենակիցների հետ, որի ժամանակ պատասխաններ են տրվել վերջիններիս հուզող հարցերին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջին եկամուտ ունեցող երկրների համար ԳԱՎԻ-ն որոշում է ընդունել շարունակել իր աջակցությունը սահմանափակ փաթեթով և ընդգրկել ԳԱՎԻ նախկին շահառու երկրներին, ինչպես նաև հետագա քննարկման դնել ԳԱՎԻ օգնություն չստացած երկրներն ընդգրկելու հարցը: Խորհրդակցություններն առ այն, թե ինչպիսին է լինելու այդ սահմանափակ փաթեթը և ինչպես են ներառվելու երկրները, շարունակվելու են և ներկայացվելու են վերջնական տեսքով 2020թ. ամռանը կայանալիք ԳԱՎԻ խորհրդի նիստին: Խորհրդակցություններն անցկացվելու են միջին եկամուտ ունեցող ԳԱՎԻ երկրների հետ: Հայաստանն այդ խորհրդակցությունների մեջ ընդգրկված է:

2021-2025թթ. համար ընդունվել է ԳԱՎԻ 5.0 ռազմավարությունը՝ ցածր եկամուտ ունեցող երկրների նկատմամբ ծրագրային ֆիլտրերի որոշակի մեղմացումներով:

Հաստատվել են նաև ԳԱՎԻ բոլոր կոմիտեների կազմերը. Հայաստանը որպես Շուկայական որոշումներին վերաբերող կոմիտեի անդամ ներկայացրել էր Վրաստանի առողջապահության նախարարի տեղակալ Թ. Գաբունիային՝ որպես Կառավարման կոմիտեի անդամության թեկնածու: Թեկնածությունը հաստատվել է փակ նիստի ժամանակ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ԳԱՎԻ 5.0 ռազմավարությունը 2021-2025թթ. իրականացնելուս համար, ԳԱՎԻ մեկնարկել է ֆինանսական միջոցների համալրման գործընթաց, որի արդյունքները ամփոփվելու են 2020թ. ամռանը կայանալիք ԳԱՎԻ Խորհրդի նիստին: Մինչ այդ, զուգահեռ ընթանալու են երկրների հետ խորհրդակցությունների աշխատանքները՝ ավելի արդյունավետ իրականացնելու տրամադրվող աջակցության առկա փաթեթները, ինչպես նաև վերլուծվելու են տրամադրվող աջակցության եղանակները և ծավալները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

2019թ. դեկտեմբերի 9